ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ », «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. **Իրավական ակտի անհրաժեշտությունը՝**

Վերոհիշյալ օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է հաշվի առնելով վերջին շրջանում բնակչության կողմից ներկայացվող բողոքները գիշերային ժամերին լռության խախտման, գիշերային ժամերին իրականացվող հրավառությունների օգտագործման կանոնների խախտումների վերաբերյալ՝ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ:

Օրենսդրական փաթեթը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության կողմից:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝**

<u>Ներկա իրավիճակը:</u>

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականից գործում է «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգը, որը սահմանում է հրատեխնիկական արտադրանքի բնութագրերը, ըստ վտանգավորության աստիճանի դրանց դասակարգումը, մակնշման, վաճառքի պայմանները, արտադրության, ներմուծման, շուկայահանման պայմանները, ինչպես նաև դրանց համապատասխանության հավաստման ընթացակարգերը:

Համաձայն ՄՄ ՏԿ 006/2011 ԵԱՏՄ[1] տեխնիկական կանոնակարգի, հրատեխնիկական արտադրատեսակները ըստ կիրառման բաժանվում են երկու խմբի՝ հրագործական և հրավառության (фейерверк) արտադրանքների: Մասնավորապես՝ հրագործական արտադրանքը՝ քիմիական նյութերի և միացությունների խտացված խառնուրդ է, որն այրման և պայթյունի արդյունքում գազային, ջերմային, մեխանիկական էներգիայի արտազատման միջոցով ստեղծում է լուսային, ձայնային, ջերմային տարբեր էֆեկտների ինքնուրույն համադրություն: Հրավառական արտադրանքը՝ թեթև հրագործական արտադրանքն է, որը նախատեսված է զվարճությունների համար:

Այս խմբերը նույնպես ըստ նպատակայնության և վտանգավորության աստիճանի բաժանվում են դասերի: Ըստ առաջացած կինետիկ էներգիայի մեծության, դրա ցրվածության շառավիղի և շարժման արագության վերոնշյալ հրագործական արտադրանքները բաժանվում են դասերի՝ I մինչև V դասի:

Հրագործական արտադրանքի շուկայահանումը իրականացվում է միայն պարտադիր համապատասխանության հավաստումից և մակնշումից հետո՝ համապատասխանության սերտիֆիկատի կամ հավաստագրի մեջ նշելով դրա վտանգավորության դասը:

III, IV և V դասի հրագործական արտադրանքների՝ որպես վտանգավոր արտադրանքներ, շահագործումը թույլատրվում է իրականացնել միայն հատուկ թույլտվություն կամ լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կողմից:

Միաժամանակ, «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր» գործունեությունը հանդիսանում է ծանուցման ենթակա, որի լիազոր մարմինը հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր» ծանուցումը իրականացվում է պարզ ընթացակարգով: Մասնվավորապես՝ «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու **<u>իրավունք ձեռք բերելու համար</u>**

[1] file:///C:/Users/nmusheghyan/Downloads/TR%20TS%20Pirotechnika.pdf

անձը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրքը և պետական տուրքի վճարման անդորրագիրը ծանուցման հետ միաժամանակ ներկայացնել լիազոր մարմին:

<u>Վիճակագրությունը:</u>

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանձնարարականի շրջանակներում հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրանքով տրամադրել տեղեկատվություն 2019 և 2020 թվականների ընթացքում «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր» գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերած անձանց մասին:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված տեղեկատվության, 2019-2020 թվականների ընթացքում թվով 101 ֆիզիկական և իրավաբանական անձիք ձեռք են բերել ծանուցման ենթակա «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր» գործունեությամբ զբաղվելու իրավունք:

Այնուհանդերձ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը աշխատանքային կարգով հարցում է արել Հավատարմագրման ազգային մարմին՝ պարզելու համար այս ոլորտում սերտիֆիկացում և համապատասխանության հավաստում իրականացնող մարմինների առկայության մասին, որին պատասխանվել է, որ նշված ոլորտում այդպիսիք չկան:

<u>Միջազգային փորձի ուսումնասիրություն</u>

Ուսումնասիրելով Directive 2007/23/EC of the European Parliament and of the Council of 23 May 2007 on the placing on the market of pyrotechnic articles ԵՄ դիրեկտիվը[2] պարզվում է, որ բացի սահմանված անվտանգության պահանջներից, ԵՄ տարածքում գոյություն ունի նաև հրագործական արտադրանքների վաճառքի սահմանափակում, մասնավորապես՝ հրագործական արտադրանքները չպետք է

[2] https://eur-lex.europa.eu/legal-content/en/ALL/?uri=CELEX:32007L0023

վաճառվեն կամ այլ կերպ հասանելի լինեն սպառողներին հետևյալ տարիքային սահմաններից ցածր.

- Հրավառության արտադրանք՝ ըստ դասի

1-ին դաս՝ 12 տարեկան

2-րդ դաս՝ 16 տարեկան:

3-րդ դաս՝ 18 տարեկան

Արտադրողներին, ներմուծողներին և դիստրիբյուտորներին արգելվում է ազատ վաճառելու ավելի բարձր դասի հրավառության կամ հրագործական իրերը՝ բացառությամբ հատուկ գիտելիքներ և որակավորվում ունեցող անձանցից:

<u>Խնդիրը:</u>

1 «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Հրագործական ապրանքների արտադրություն, **ներմուծում կամ առևտուր**» ծանուցումը իրականացվում է պարզ ընթացակարգով՝ առանց տարբերակելու, թե տնտեսավարողը ծանուցման իրավունք է ստանում ցածր դասի հրագործական արտադրանքի շրջանառության համար, թե բարձր դասի հրագործական արտադրանքի շրջանառության համար: Միաժամանակ, ծանուցման գործունեությունը տարանջատված չէ, մասնավորապես՝ մեկ ծանուցման իրավունքով տնտեսավարողը ձեռք է բերում շրջանառության բոլոր փուլերում գործունեություն իրականացնելու իրավունք:

2 Ծանուցման ժամանակ չի պահանջվում անվտանգության անհրաժեշտ փաստաթղթերը:

3 Ներկայումս առկա չէ հրագործական արտադրանքի վաճառքը սահմանափակող օրենսդրական նորմ:

4 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-204 օրենքի համաձայն՝ Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների համար նախատեսված հրագործական նյութերի (արտադրանքի), հրագործական բաղադրիչների և այլ պայթուցիկ սարքերի (նյութերի) **<u>վաճառքը թույլատրվում է բացառապես</u>**

<u>սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից</u> տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվություն ստացած իրավաբանական անձանց:

Ստացվում է, որ տնտեսավարողը միևնույն գործառույթի (վաճառքի) համար պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից կրկնակի թույլտվություն է ստանում՝ վաճառքի համար համայնքի ղեկավարի թույլտվությունը և ծանուցման իրավունքի ստացում, քանի որ ծանուցման ենթակա «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առևտուր» գործունեությունը նույնպես ենթադրում է վաճառքի թույլտվություն:

1. ***Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը՝*** Օրենսդրական փաթեթը նախատեսում է հրագործական արտադրանքի շրջանառության և շահագործման իրավական կանոնակարգումներ:

2. Օրենսդրական փաթեթը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության կողմից:

5. Առաջարկվող փոփոխությունները՝

Փաթեթով սահմանվել է՝

1) **«Հրատեխնիկական արտադրանք»** հասկացությունը և նախագծով ամրագրվել է, որ հրատեխնիկական արտադրանքի շրջանառության բոլոր փուլերում անվտանգության պահանջները պետք է համապատասխանեն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 770 որոշմամբ հաստատված «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Նշենք, որ Կանոնակարգի գործողությունը ՀՀ տարածքում ուժի մեջ է մտել դեռևս 2015 թվականից:

2) Նախագծով սահմանվել է «Հրատեխնիկական արտադրանքի դասերը» հասկացությունը, որը որոշվում է Կանոնակարգի պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատման ընթացակարգերով, և ցույց է տալիս դրանց շահագործման ժամանակ պոտենցիալ վտանգավորության աստիճան է:

3) Ըստ վտանգավորության աստիճանի հրատեխնիկական արտադրանքը բաժանվում է I, II, III, IV և V դասի:

4) I, II դասի հրատեխնիկական արտադրանը համարվում է կենցաղային նշանակության, իսկ III, IV և V դասինները՝ տեխնիկական նշանակության:

5) Իսկ I, II դասին պատկանող այն հրատեխնիկական արտադրանքները, որոնց ձայնագիտական (ակուստիկական) ճառագայթումը 0.25 մետր հեռավորության վրա չի գերազանցում 60 դԲ, սահմանվել են որպես Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառքի և շահագործման համար չարգելված հրատեխնիկական արտադրանք: Դրանց շահագործումը չի պահանջում հատուկ գիտելիքների իմացություն:

6) Սահմանվել է **հրավառություն հասկացությունը**, որը իրականացվում է բացառապես լիցենզավորված իրավաբանական անձանց կողմից՝ III, IV և V դասի հրատեխնիկական արտադրանքի կիրառմամբ:

7) Հրավառությունները իրականացնում են բացառապես **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվերների հիման վրա «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տոն օրերին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում:**

8) Հրավառությունների իրականացման դեպքերը և թույլատրության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

9) Տեղական ինքնակառավարման մարմինների պատվերների հիման վրա հրավառության անցկացման վայրի, ամսաթվի և ժամի որոշումը սահմանվում է համայնքի ավագանու կողմից:

10) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում հրավառության անցկացման վայրի, ամսաթվի և ժամի որոշումը սահմանվում է Երևան քաղաքում՝ քաղաքապետի կողմից, համայնքում՝ համայնքի ղեկավարի կողմից :

11) Նախագծով սահմանվել է պաշտպանական դրույթ, համաձայն որի բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով, **պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր սահմանափակող և պաշտպանիչ միջոցները՝** հրատեխնիկական արտադրանքների Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման, ինչպես նաև շուկայից դուրս հանելու ուղղությամբ:

12) Այս դրույթի համատեքստում մշակվել է նաև «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 006/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված **I, II, III, IV և V դասի հրատեխնիկական արտադրանքների** ներմուծման ժամանակավոր արգելքի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

13) Որոշմամբ սահմանված արգելքը չի տարածվում այն ապրանքների վրա, որոնց մասով մատակարարման պայմանագրերը կնքվել են մինչև որոշման ուժի մեջ մտնելը և այդ ապրանքները նույնականացվում են մաքսային մարմինների կողմից:

14) Սահմանվել է հրատեխնիկական արտադրանքների իրացմանն ու շահագործմանը ներկայացվող անվտանգության պահանջներ: